ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 20 » մարտի 2017 թ. N 80-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 40-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի փետրվարի 15-ի «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման գործընթացը կանոնակարգելու մասին» N 40-Ա հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի N2 աղյուսակը և N2 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանին:

Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2017 թվականի մարտի 20 –ի
N 80 -Ա հրամանի
«Հավելված
Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2017 թվականի փետրվարի 15-ի
N40-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

1. «Պետական աջակցություն հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակը Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման գործում աջակցելը և հողերի արդյունավետ օգտագործման ու գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների աճի միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը նպաստելն է:

2. Ծրագրի ավարտի ժամկետ է սահմանվում 2017 թվականի դեկտեմբերի 10-ը:

3. Ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման համար նվազագույն շահավետ գին որոշելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից մրցակցային հիմունքներով կազմակերպվել է մատակարարների ընտրություն: Նվազագույն շահավետ գին են առաջարկել «Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» և «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները:

4. Ծրագրի շրջանակներում իրականացվելու է Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2016 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրով նախատեսված, սակայն չբաշխված 2944.15 տոննա ազոտական, 504.25 տոննա ֆոսֆորական և

559.45 տոննա կալիումական պարարտանյութերի բաշխումը «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից:

5. Ծրագրի 3-րդ և 4-րդ կետերում նշված ընկերություններն ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատակարարումը և բաշխումը՝ ըստ մարզերի ու կազմակերպությունների, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանն իրականացնելու են՝ համաձայն N 1 և N 2 աղյուսակների:

6. Մատակարարները ծրագրով նախատեսված ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի մատակարարումն իրականացնելու են առանց բյուջետային վարկի:

7. Հաշվի առնելով մատակարարման ենթակա պարարտանյութերի համայնքների բաշխման ժամկետները՝ «Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համապատասխան պայմանագիր է կնքում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ, պայմանագրում նախատեսելով դրույթ նմուշառման և մաքսազերծման ծախսերը մատակարարի միջոցների հաշվին իրականացնելու վերաբերյալ:

8. Մատակարարված ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը (այսուհետ՝ պարարտանյութ) «Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ընդունելուց հետո և բաշխումը կազմակերպելու համար «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը համապատասխան պայմանագրեր է կնքելու նաև Հայաստանի Հանրապետության մարզպետարանների հետ:

9. «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները ներմուծված պարարտանյութերի ընդունում և բաշխումը կազմակերպելու համար համապատասխան պայմանագրեր են կնքելու Հայաստանի Հանրապետության մարզպետարանների հետ:

10. Մատակարարվող պարարտանյութերը պետք է համապատասխանեն սույն ծրագրի N 3 աղյուսակով սահմանված տեխիկական բնութագրին:

11. Պարարտանյութը «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում: Ծրագրի շրջանակներում ներմուծված պարարտանյութը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ենթարկվում է նմուշառման և լաբորատոր փորձաքննության:

12. Լաբորատոր փորձաքննություն իրականացնող կազմակերպությունը փորձաքննության արդյունքը agro@minagro.am էլեկտրոնային փոստի հասցեով անհապաղ ուղարկում է Նախարարություն, որից հետո միայն ներմուծված պարարտանյութը տեխնիկական բնութագրին համապատասխանելու դեպքում Նախարարությունը թույլատրում է այն բաշխել:

13. Տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու դեպքում պարարտանյութը չի բաշխվում և պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում համապատասխան մատակարար կազմակերպությունը:

14. Նախարարությունը՝

1) պայմանագրային հիմունքներով որպես սուբսիդիա «Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» և «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հատկացնում է 673,295,750.0 դրամ, որից 586,588,700.0 դրամը՝ 31937.85 տոննա ազոտական, 59,906,250.0 դրամը՝ 479.25 տոննա ֆոսֆորական և 26,800,800.0 դրամը՝ 343.6 տոննա կալիումական պարարտանյութեր ձեռք բերելու ու Հայաստանի Հանրապետության համայնքների հողօգտագործողներին, կազմակերպություններին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մեկ պարկը՝ 6000 դրամ արժեքով ազոտական պարարտանյութ, 7000-ական դրամ արժեքով ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր վաճառելու համար,

2) առանց մրցույթի անցկացման, որպես դրամաշնորհ, սահմանված կարգով, պայմանագրային հիմունքներով «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնում է 111,995,000.0 դրամ և 92,759,375.0 դրամ «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծված պարարտանյութերի բեռնման և համայնքներ

փոխադրման աշխատանքները կազմակերպելու նպատակով (1 տոննան 6250 դրամ): Ծրագրով նախատեսված մատակարարների հետ կնքվող պայմանագրերում պարտադիր ամրագրվում են դրույթներ մատակարարների պարտավորությունների և պատասխանատվության վերաբերյալ,

3) ծրագրի համար նախատեսված սուբսիդիայի և դրամաշնորհի հատկացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից լրացված և հաստատված N 1 ձևը, որպես հայտ էլեկտրոնային փոստով տրամադրում է համապատասխան պարարտանյութը մատակարարող կամ բաշխումն իրականացնող կազմակերպությանը,

4) ծրագրի իրականացման ընթացքի մասին՝ ըստ անհրաժեշտության, տեղեկատվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ.

5) ծրագրի ավարտից և մատակարարների կողմից հաշվետվությունները ստանալուց հետո մինչև 2018 թվականի փետրվարի 1-ն ամփոփ հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի N 73-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2016 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում չբաշխված 2944.15 տոննա ազոտական, 504.25 տոննա ֆոսֆորական և 559.45 տոննա կալիումական պարարտանյութերը «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները 2017 թվականի գարնանը ծրագրի շրջանակներում կբաշխեն հողօգտագործողներին:

16. Ծրագրով նախատեսված պարարտանյութի բաշխումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների հսկողությամբ հետևյալ հողօգտագործողներին՝ գյուղացիական տնտեսություններին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով

համատեղ գործունեության պայմանագիր կնքած անձանց և 2016 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1001-Ն որոշմամբ հողօգտագործողներին հատկացված աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացուներից ստացված էլիտային վերարտադրության սերմացուներ ձեռք բերած շահառուներին՝ ըստ փաստացի մշակվող հողատարածքի չափի, հետևյալ չափաքանակներով՝

1) ազոտական պարարտանյութ՝ մեկ հեկտարի համար, մինչև 300 կիլոգրամ, յուրաքանչյուր հողօգտագործողին (գյուղացիական տնտեսություններին առավելագույնը մեկ տոննա),

2) ֆոսֆորական պարարտանյութ՝ մեկ հեկտարի համար, մինչև 400 կիլոգրամ, առանց սահմանափակման,

3) կալիումական պարարտանյութ՝ մեկ հեկտարի համար, մինչև 150 կիլոգրամ, առանց սահմանափակման.

17. Հայաստանի Հանրապետության մարզպետները՝

1) հիմք ընդունելով համայնքներում 2016 թվականին փաստացի մշակված հողատարածքները և 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար ծրագրի N 1 և N 2 աղյուսակներով սահմանված մարզին հատկացվող պարարտանյութերի քանակները, համապատասխան համայնքի ղեկավարի կողմից պահանջվող պարարտանյութի քանակի համար վճարումը հավաստող վճարման անդորրագրի պատճենը և վճարում կատարած հողօգտագործողների ցուցակը՝ N 2 ձևը, N1 ձևի հետ միասին ծրագրի 14-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացնում են նախարարություն:

2) իրականացնում են ծրագրի 16-րդ կետով իրենց վերապահված աշխատանքները,

3) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են պարարտանյութեր գնել ցանկացող հողօգտագործողներից ծրագրով նախատեսված գնով գումարների հավաքագրումը,

4) ապահովում են բաշխվող պարարտանյութերի համար հավաքագրված գումարների փոխանցումը «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության բանկային հաշվեհամարին, բացառությամբ սկզբնական փուլում բաշխման ենթակա (2016 թվականի մնացորդ) ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի չափաքանակի

համար հավաքագրված գումարների, որոնք փոխանցվում են «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաշվեհամարին՝ համաձայն աղյուսակ N2-ի,

5) համայնքների ղեկավարների միջոցով ապահովում են ծրագրի շրջանակներում համայնքներում պարարտանյութեր գնած հողօգտագործողների ցուցակների հավաքագրումը՝ համաձայն N 2 ձևի, պահպանությունը և այդ ցուցակների տրամադրումը նախարարությանը՝ տեղեկատվությանը տիրապետելու, ուսումնասիրություն և հսկողություն իրականացնելու համար,

6) ապահովում են ծրագրի ավարտից հետո 15-օրյա ժամկետում ծրագրի շրջանակներում մարզի համայնքների համար նախատեսված, փաստացի վաճառված պարարտանյութերի քանակի և հողօգտագործողների մասին տեղեկատվության հավաքագրումը և հաստատումը՝ համաձայն N 3 ձևի, մեկական օրինակ տրամադրելով նախարարությանը:

18. «Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» և «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները սույն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն են ներկրում ծրագրի N 1, N 2, և N 3 աղյուսակներով սահմանված քանակի և տեխնիկական պահանջներին համապատասխանող պարարտանյութ:

19. «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն իրականացնում են պարարտանյութերի բաշխումը և վաճառքը հողօգտագործողներին սույն ծրագրի 21-րդ կետով սահմանված գներով:

20. Պարարտանյութերի տրամադրումն իրականացվում է համայնքների ղեկավարների միջոցով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից հաստատված N 1 ձևի և համայնքի ղեկավարի կողմից հաստատված N2 ձևի:

21. Պարարտանյութերի վաճառքն իրականացվում է հետևյալ գներով՝

1) մեկ կիլոգրամ ազոտական պարարտանյութը՝ 120 դրամ (50 կգ քաշով մեկ պարկը՝ 6000 դրամ),

2) մեկ կիլոգրամ ֆոսֆորական պարարտանյութը՝ 140 դրամ (50 կգ քաշով մեկ պարկը՝ 7000 դրամ),

3) մեկ կիլոգրամ կալիումական պարարտանյութը՝ 140 դրամ (50 կգ քաշով մեկ պարկը՝ 7000 դրամ):

22. «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն էլեկտրոնային փոստով Նախարարություն են ներկայացնում տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների հավաքագրված գումարների և իրացված պարարտանյութերի քանակների մասին (կցելով ծրագրի 23-րդ կետով նախատեսված հանձնման-ընդունման ակտի պատճենը):

23. «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն ապահովում են համայնքների հողօգտագործողներից փաստացի հավաքագրված գումարների դիմաց պարարտանյութերի մատակարարումը համապատասխան համայնքին՝ համայնքի ղեկավարի հետ կազմելով պարարտանյութերի հանձնման-ընդունման երկկողմանի հաստատված ակտ՝ համաձայն N 4 ձևի:

24. «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» և «Հրաշք այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Նախարարություն են ներկայացնում՝

1) ծրագրի կատարման մասին հաշվետվություն,

2) ֆինանսական հաշվետվություն:

25. Ծրագրի ընթացքի վերահսկողությունն իրականացնում է Նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչությունը գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների հետ համատեղ, հսկողությունը՝ համապատասխան մարզպետարանները, իսկ մոնիթորինգը՝ Նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչությունը:

26. Նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության, ինչպես նաև գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչությունների կողմից կատարված՝ համապատասխանաբար վերահսկողության և մոնիթորինգի արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին:

Աղյուսակ N1

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԱԶՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՔԱՆԱԿԻ

Հ/հ	Մարզեր և կազմակեր-պություններ	**Ազոտական պարարտանյութ**								
		Մասիսի «Բերրիություն» ՍՊԸ (ՀՀ) (տոննա)			**«Տարգովիյ Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (տոննա)**			**Ընդամենը (տոննա)**		
		Մնացորդ 2016 թ	Ներկրվող քանակը 2017 թ.	Ընդամենը մատակա-րարում 2017 թ.	Մնացորդ 2016 թ	Ներկրվող քանակը 2017 թ.	Ընդամենը մատակա-րարում 2017 թ.	Մնացորդ 2016 թ	Ներկրվող քանակը 2017 թ.	Ընդամենը մատակա-րարում 2017 թ.
1	Արագածոտն		3,300.0	3,300			0.0	0.0	3,300.0	3,300.0
2	Արարատ			0		3,260.0	3,260.0	0.0	3,260.0	3,260.0
3	Արմավիր		6,000.0	6,000			0.0	0.0	6,000.0	6,000.0
4	Գեղարքունիք	2,887.15		2,887.15		3,536.35	3,536.35	2,887.15	3,536.35	6,423.5
5	Լոռի			0.00		2,500.0	2,500.0	0.0	2,500.0	2,500.0
6	Կոտայք			0.00		1,900.0	1,900.0	0.0	1,900.0	1,900.0
7	Շիրակ			0.00		5,500.0	5,500.0	0.0	5,500.0	5,500.0
8	Սյունիք		2,000.0	2,000.0			0.0	0.0	2,000.0	2,000.0
9	Վայոց Ձոր		541.5	541.5			0.0	0.0	541.5	541.5
10	Տավուշ			0.0		400.0	400.0	0.0	400.0	400.0
11	ԼՂՀ		3,000.0	3,000.0			0.0	0.0	3,000.0	3,000.0
12	«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ	45		45.0			0.0	45.0	0.0	45.0
13	«Սերմերի գործակա-լություն» ՊՈԱԿ	12		12.0			0.0	12.00	0.00	12.00

Ընդամենը	2,944.15	14,841.5	17,785.65	0.0	17,096.35	17,096.35	2,944.15	31,937.85	34,882.0

Աղյուսակ N2

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԼԻՈՒՄԱԿԱՆՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ

ՀՀ Մարզերը և կազմակերպությունները	Ֆոսֆորական պարարտանյութ			Կալիումական պարարտանյութ		
	Նախատեսվող քանակությունը (տոննա)	2016 թվականի ծրագրից մնացած «Հրաշք այգի» ՍՊԸ-ի մոտ առկա մնացորդային քանակությունը (տոննա)	«Տարգովի Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի միջոցով մատակարարվող քանակությունը (տոննա)	Նախատեսվող քանակությունը (տոննա)	2016 թվականի ծրագրից մնացած «Հրաշք այգի» ՍՊԸ-ի մոտ առկա մնացորդային քանակությունը (տոննա)	«Տարգովի Դոմ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի միջոցով մատակարարվող քանակությունը (տոննա)
Արագածոտն	80	50	30	60	40	20
Արարատ	179.5	100	79.5	170.7	130	40.7
Արմավիր	200	100	100	200	120	80
Գեղարքունիք	212.4	99.95	112.45	176.4	100	76.4
Լոռի	100	50	50	80	38.5	41.5
Կոտայք	66	33	33	82	42	40
Շիրակ	80	40	40	100	70	30
Սյունիք	50	25	25	20	10	10
Վայոց Ձոր	7.6	3.3	4.3	6.95	3.95	3
Տավուշ	5	3	2	5	3	2
ՀՀ ԳՆ «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ	0	0	0	0	0	0
ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	3	0	3	2	2	0
Ընդամենը	983.5	504.25	479.25	903.05	559.45	343.6

Աղյուսակ N 3

ԱԶՈՏԱԿԱՆ, ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԼԻՈՒՄԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Պարարտանյութի տեսակը	**Տեխնիկական բնութագիրը**
Ազոտական	(**Ամոնիակային սելիտրա (ամոնիումի նիտրատ)՝** մատչելի ազոտի նվազագույն քանակը 34 %, խոնավութունը 0.3 %-ից ոչ ավելի, գրանուլացված՝ 1-4 մմ տրամագծով գրանուլների քանակը 95 %, փաթեթավորված 50 կգ պարկերում, պիտակավորված «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Կարող է պարունակել մինչև 0.6% կալցիումի ու մագնեզիումի նիտրատների և 0.5 % սուլֆատների ու ֆոսֆորոսուլֆատների խառնուրդներ:
Ֆոսֆորական	(**Կրկնակի սուպերֆոսֆատ)՝** P_2O_5 նվազագույն քանակը 46 %, ազատ H_3PO_4–ի քանակը 5.5 %-ից ոչ ավելի, խոնավությունը 0.3 %-ից ոչ ավելի, գրանուլացված՝ 1 մմ-ից փոքր տրամագծով գրանուլների քանակը մինչև 3 %, 1-4 մմ-ը՝ 90 %, փաթեթավորված 50 կգ պարկերում, պիտակավորված «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
Կալիումական	(**Կալիումական աղ)՝** K_2O-ի նվազագույն քանակը 60 %, խոնավությունը 0.5 %-ից ոչ ավելի, գրանուլացված՝ 1-4 մմ տրամագծով, գրանուլների քանակը 95 %, 1 մմ-ից փոքր տրամագծով գրանուլների քանակը մինչև 5 %, փաթեթավորված 50 կգ պարկերում, պիտակավորված «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Ձև N 1

«Հաստատում եմ»
ՀՀ _____ մարզպետ
_____
(անունը, ազգանունը)
_____
(ստորագրությունը)
____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԱԶՈՏԱԿԱՆ, ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԼԻՈՒՄԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ՄԱՐԶԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԱԶՈՏԱԿԱՆ, ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԼԻՈՒՄԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Համայնքը	Ազոտական պարարտանյութի քանակը (տոննա)	Ազոտական պարարտանյութի դիմաց հավաքագրված գումարը (դրամ)	Ֆոսֆորական պարարտանյութի քանակը (տոննա)	Ֆոսֆորական պարարտանյութի դիմաց հավաքագրված գումարը (դրամ)	Կալիումական պարարտանյութի քանակը (տոննա)	Կալիումական պարարտանյութի դիմաց հավաքագրված գումարը (դրամ)
1.							
2.							
3.							
4.							
5.							
...							
Ընդամենը							

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Ձև N 2

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԱԶՈՏԱԿԱՆ, ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԼԻՈՒՄԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀՀ _____ ՄԱՐԶԻ _____ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ

NN ը/կ	Հողօգտագործողի անունը, հայրանունը, ազգանունը	Հողօգտագործողի անձնագրի տվյալները	Մշակվող հողատարածքի չափը (հա)	Պարարտանյութի տեսակը	Պարարտանյութի քանակությունը (կգ)	Պարարտանյութի դիմաց վճարված գումարը (դրամ)	Վճարման ամիսը, ամսաթիվը	Հողօգտագործողի ստորագրությունը	Հեռախոսահամարը
1	2	3	4	5	6	7	8	9	10

Համայնքի ղեկավար _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Ձև N 3

«Հաստատում եմ»

ՀՀ _____ մարզպետ

_____

(անունը, ազգանունը)

_____

(ստորագրությունը)

____ _____ 20 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԱԶՈՏԱԿԱՆ, ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԼԻՈՒՄԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ _____ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ, ՓԱՍՏԱՑԻ ՎԱՃԱՌՎԱԾ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Համայնքը	Համայնքի ղեկավարի ազգանունը, անունը	Նախա-տեսված ազոտական պարարտա-նյութի քանա-կությունը (կգ)	Փաստացի վաճառված ազոտական պարարտա-նյութի քա-նակությունը (կգ)	Նախա-տեսված ֆոսֆորա-կան պա-րարտա-նյութի քանա-կությունը (կգ)	Փաստացի վաճառված ֆոսֆորական պարարտա-նյութի քա-նակությունը (կգ)	Նախա-տեսված կալիումա-կան պա-րարտա-նյութի քանա-կությունը (կգ)	Փաստացի վաճառված կալիումական պարարտա-նյութի քա-նակությունը (կգ)	Պարար-տանյութ գնած շահառու-ների թիվը	Համայնքի ղեկավարի ստորագրու-թյունը
Ընդամենը										

Մատակարար կազմակերպության անվանումը _____

Տնօրեն _____

(ստորագրությունը)

Կ. Տ.

Ձև N 4

Ա Կ Տ

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության _____ մարզի _____ համայնքի ղեկավար _____ -ը, մի կողմից, և _____ ընկերության տնօրեն _____-ը, մյուս կողմից, սույնով հաստատում ենք, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2017
թվականի փետրվարի -ի N -Ա հրամանի շրջանակներում, համայնքի համար մարզպետի կողմից հաստատված չափաքանակին համապատասխան, _____ _____ ընկերության հաշվեհամարին փոխանցված _____ _____ դրամի դիմաց մատակարարը 20____ թվականի _____-ին համայնքին է հանձնել _____ տոննա ազոտական, _____ տոննա ֆոսֆորական և _____ տոննա կալիումական պարարտանյութեր:

ՀԱՆՁՆԵՑ	ԸՆԴՈՒՆԵՑ
_____	_____ համայնքի ղեկավար
_____	_____
(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ. Տ.	Կ. Տ.